ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 945 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 1318-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԵՐԵՎԱՆԻ ՇՈԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ԵՐԵՎԱՆԻ ՇՈԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ» փակ բաժնետիրական ընկերության, «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 1318-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) ցանկը 53-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 54-55-րդ կետերով՝

«

54.	1803100000	Կակաո լոսած (քերուկ) կամ կակաո զանգված	Կակաո զանգված յուղազերծված կամ ոչ յուղազերծված	կգ	300 000	ԵՄ երկրներ, Գանա, Կոտ դ'Իվուար, Մալայզիա, Ինդոնեզիա, Նիգերիա	ԵՄ երկրներ, Գանա, Կոտ դ'Իվուար, Մալայզիա, Ինդոնեզիա, Նիգերիա	1 970 000 000	
55.	1804000000	Կակաո յուղ	100% կակաոյի յուղ, հալման ջերմաստիճանը 31-35C	կգ	150 000	ԵՄ երկրներ, Գանա, Կոտ դ'Իվուար, Մալայզիա, Ինդոնեզիա, Նիգերիա	ԵՄ երկրներ, Գանա, Կոտ դ'Իվուար, Մալայզիա, Ինդոնեզիա, Նիգերիա	1 606 000 000	

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «10 612 737 000» թիվը փոխարինել «14 188 737 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ